

Илл. 1. Фрагмент коронационного списка Летописи Смбата. Последняя строка – упоминание об ишхане Моловона Ажаросе.



Илл. 2. Фрагмент Летописи Смбата Гундстабля с перечислением 6-ти антиохийских баронов, перешедших на службу к Левону I.

ԱՐԱՏԵՍԻ ԵՒ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Լուսինէ Բարսեղեան

Հայ եկեղեցու պատմութեան մէջ Նորավանքի եպիսկոպոսարանը եպիսկոպոսական աթոռների շարքում առանձնացել է մի իւրայատկութեամբ, այն է՝ բուն աթոռանիստ վայրից բացի, եւս երկու վանքերի՝ Արատէսի եւ Վերին Նորավանքի ներքի՝ գրաւումը, մէկը որպէս ամառային նստավայր, միւսը՝ ուսումնական կենտրոն[1]:

Արատէսի մասին մեզ հասած մատենագրական եւ վիմագրական տուեալները թէեւ շատ չեն, այդուհանդերձ, դրանց համակարգման ու ամբողջացման արդիւնքում կարելի է պատկերացում կազմել այժմ կիսաւէր վանքի երբեմնի նշանակութեան եւ ծաւալած գործունէութեան մասին: Արատէսի վանքը[2] բաղկացած է երեք եկեղեցիներից՝ Սբ. Սիոն (Է. դ.), Սբ. Աստուածածին (Ժ. դ. վերջ - ԺԱ. դ. սկիզբ), Սբ. Կարապետ (ԺԱ.-ԺԲ. դդ.) եւ ԺԳ. դարի երկրորդ կէսին կառուցուած գաւիթ-ժամատնից: Վանքամերձ տարածքում կան նաեւ Է.-ԺԷ. դդ. խաչքարեր եւ տապանաքարեր:

Արատէսի գրչութեան կենտրոնի գործունէութիւնը վերաբերում է ԺԳ.-ԺԶ. դարերին: Այս ժամանակաշրջանի սկզբում վանքը գտնուել է Պռոշեանների իշխանական տան հովանու ներքոյ: Պռոշեանց իշխանութեան հիմնադիր Վասակ Խաղբակեանը Վայոց ձորի ամրոցների ազատագրման փաստի առթիւ 1220 թ. արձանագրութիւն է թողել Արատէսի վանքում[3]: Արատէսը վերելք է ապրել Օրբէլեանների իշխանութեան ներքոյ յայտնուելուց յետոյ: Յայտնի է, որ 1270 թ. Սմբատ Օրբէլեանի պատուէրով վանքի առաջնորդ աբեղայ Հայրապետը նորոգել է Արատէսի եկեղեցիները, կառուցել գաւիթը եւ այգիներ նուիրել վանքի Սբ. Սիոն եկեղեցուն[4]: Այս նոյն Հայրապետի մասին տեղեկութիւն ենք ստանում Արատէսի վանքի մասին մատենագրական առաջին յիշատակութիւնը պարունակող ձեռագրում՝ գրուած 1284 թ. Գնդէվանքում, որտեղ գրիչ Յովհաննէսը նշում է, որ ձեռագրի ստացող Վարդան վարդապետը Արատէսի դպրոցի եւ Հայրապետ ուսուցչի սանն է եղել («...սնեալ եւ վարժեալ ի սուրբ ուխտին, որ կոչի Արատէս, առ ոտս աստուածազարդ դաբուն Հայրապետի, նորոգիչ եկեղեցոյ եւ սիրող սրբութեան...»)[5]: Այստեղից պարզ է դառ-

1 *Կ. Մաթեւոսեան, Դրուագներ Նորավանքի եպիսկոպոսական աթոռի պատմութիւնից (Արատէս եւ Նորավանք),*- Նորավանք (յօդուածների ժողովածու), Մոնրէալ-Երեւան, 2001, էջ 62-76:

2 Հնում կոչուել է նաեւ Այսասի, Արատենք, ուշ շրջանում՝ Ղզլգիւղ:

3 Կեչառոյքը եւ Վայոց ձորի մի մասը Զաքարեանների կողմից վարձատրութիւն էր Վասակին՝ երկու գաւառների գրաւման գործակցութեան համար: Տե՛ս *Դիւան հայ վիմագրութեան* (այսուհետեւ՝ Դիւան), կազմեց՝ Ս. Բարխուդարեան, Երեւան, 1967, պրակ 3, էջ 123. *Գ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 9, Յաւելուած Ա. 3:

4 ԺԳ. դարի երկրորդ կէսը յատկանշւում է Օրբէլեանների ծաւալած շինարարական լայն գործունէութեամբ (1261 թ. Նորավանքի Սբ. Կարապետ եկեղեցու գաւթի, 1273-1290 թթ. Նորավանքի հիւրատան, 1275 թ. Օրբէլեանների տոհմական դամբարանի, ինչպէս նաեւ Արփա գետի վրայ կամրջի կառուցումները):

5 *Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, կազմեց՝ Ս. Տէր-Աւետիսեան, հտ. Ա., Վիեննա, 1970, էջ 50, ձեռ. թիւ 35:

նում, որ արդէն ԺԳ. դարի վերջերին Արատէսում որոշակի մակարդակի հասած դպրոց է եղել: Հայրապետի ըաբունապետ լինելու մասին վկայում է նաեւ նրա 1290 թ. տապանաքարը. «Զերջանիկ ըաբունապետն Հայրապետ, նորոգող այսմ ուխտի յիշեցէք. Թվին ՉԼԹ *(1290)*»[6]:

Մետրոպոլիտ դառնալուց յետոյ Ստեփանոս Օրբէլեանը միաւորում է Սիւնեաց աթոռը՝ Նորավանքի ու Տաթեւի պառակտուած թեւերը, գնումների ու նուիրատուութիւնների միջոցով ընդարձակում դրանց հողային տիրոյթները եւ քայլեր ձեռնարկում աթոռի տնտեսական ու կրթամշակութային վիճակի բարելաւման ուղղութեամբ: Նրա կարեւոր ձեռնարկումներից էր Արատէսի եկեղեցիների վերանորոգումը եւ վանքը որպէս ամառանոց-աթոռանիստ հաստատելը: Արատէսի ընտրութիւնը պատահական չէր. այն ոչ միայն ունէր նպաստաւոր աշխարհագրական դիրք, այլեւ ժամանակին հրաշալի մի համալիր էր[7]:

Ստեփանոս Օրբէլեանն իր պատմութեան մէջ գրում է. «Վայոց ձորի մշտապէս գործող վանքերը՝ Խոտակերաց վանքը...Նորավանքը, որ յետոյ դարձաւ եպիսկոպոսարան, միւս Նորավանքը ...ապա Հերմոնի վանքը, Արատինից վանքը...»: *Արատէսը յիշատակում է նաեւ իրեն պատկանող վանքերի թւում, մէկ անգամ էլ նշում է Արատենք գիւղը*[8]: *Յետոյ գրում է.* «Քանի որ Նորավանքի տեղը տօթ էր, եւ եպիսկոպոսներն ու սպասաւորները ամառ ժամանակ չէին կարողանում այնտեղ ապրել, որոշեցինք [օգտագործել] Արատէսի վանքը, որ Եղեգիքից վերեւ է: Վանքն իր բոլոր շինութիւններով եւ հոգեբաժին տուած կալուածքներով, գիւղն իր շրջակայ բոլոր սահմաններով յանձնեցինք սուրբ Նորավանքին, որ սրա միաբանները այն սերնդէսերունդ տնօրինեն...»[9]: *Դա տեղի է ունեցել մինչեւ 1297 թ., քանզի Օրբէլեանն իր պատմութիւնն աւարտել է այդ թուին:*

1301 թ. նուիրատուական արձանագրութեան մէջ նշւում է, որ Ստեփանոս Օրբէլեանը Գեղարքունեաց շուրջ ութ գիւղ նուիրել է Արատէսի Սբ. Սիոն, Սբ. Աստուածածին եւ Սբ. Կարապետ եկեղեցիներին[10]: *Յաջորդ յիշատակութիւնը պահպանուել է Ստեփանոս Օրբէլեանի պատուիրած՝ Խաչատուր Երզնկացու 1303 թ. Մեկնութեան մէջ* «...Ընդ հովանեաւ սուրբ մենաստանիս՝ մականուն կոչեցեալ Արատես...»[11]:

Ստեփանոս Օրբէլեանի մետրապոլիտութեան տարիներին (1287-1303) եւ նրանից յետոյ էլ Արատէսի վանքը մշակութա-

6 *Դիւան*, էջ 124 (տապանաքարն այժմ գոյութիւն չունի): Մէկ այլ աղբիւրում նշուած է 1260 թ. (տե՛ս *Материалы по археологии Кавказа*, вып. XIII, М., 1916, с. 85-86):

7 Վանքի կառոյցները կատարեալ են ճարտարապետական տեսանկիւնից: Գաւիթը ծածկուած է խաչաձեւող կամարների մի տարատեսակով, որը եզակի է հայկական ճարտարապետութեան մէջ: Բացի այդ, Արատէսի վանքը նաեւ գինեգործութեան վայր է եղել: Այգիներից ստացուած մթերքը մշակելու նպատակով այգետեղերում կամ վանքերի տարածքում կառուցուել են հնձաններ, որտեղ ստացուող գինին օգտագործուել է եկեղեցիներում՝ Սբ. Հաղորդութեան խորհրդի ժամանակ: Պատահական չէ, որ գինու կուժերի եւ կարասների զարդաքանդակները զարդարում են մի շարք հոգեւոր կառոյցների ճարտարապետական յօրինուածքները, ինչպէս Արատէսում: Կենցաղային տապանաքարերի քանդակները եւս դրա ապացոյցն են. հանդիպում են կանթաւոր թասեր ու սափորներ: Տե՛ս *Ա. Յարութիւնեան, «Բաժակ» գինու նուիրաբերման վկայութիւններ հայկական վիմագրերում*,- Էջմիածին, 2011, Բ, էջ 121-129:

8 *Ստեփանոս Օրբէլեան, Սիւնիքի պատմութիւն*, Երեւան, 1986, էջ 282, 375, 396:

9 *Ստեփանոս Օրբէլեան*, նշ. աշխ., էջ 383:

10 *Ստեփանոս Օրբէլեան*, նշ. աշխ., էջ 493. *Դիւան*, էջ 126. *Հ. Ղեւոնդ Ալիշան, Սիսական*, Վենետիկ, 1893, էջ 144:

11 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, կազմեց՝ Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 17: Այս ձեռագիրը պատմիչի գործունէութեան մասին վերջին վկայութիւնն է, քանզի «ԹՎԻՍ ՉԾԲ (1303) ԱՑՍ Է ԾԻՐԻՄ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՄԵԾԻ ՄԵՏՐԱՊԱԼԻՏԻՆ ՍԻՒՆԵԱՑ ՍՏԵՓԱՆՈՍԻ» (տե՛ս *Դիւան*, էջ 233, արձ. 751):

յին կենտրոն է եղել՝ գործունէութիւնն ընդհատումներով շարունակելով ընդհուպ մինչեւ ԺԷ. դար: Մշակութային սերտ կապերը, որ հաստատուել էին Ստեփանոս Օրբէլեանի օրօք, շարունակւում են նաեւ նրան յաջորդած Գլաձորի սաներ Յովհաննէս Օրբէլի եւ Ստեփանոս Տարսայիճի ժամանակ:

1310 թ. Պօղոս վարդապետը «երանաւէտ, գերազարդ եւ գերամաքուր, սուրբ եւ երանաշնորհ» *Տէրունական քահանայի պատուէրով* «ի ծերացեալ ժամանակի» *ընդօրինակում է մի Աւետարան (ՄՄ, ձեռ. թիւ 4446): Յիշատակարանի վերջում կարդում ենք.* «...ես նուաստ աշխատաւոր սորա՝ Պաւենք. «...ես նուաստ աշխատաւոր սորա՝ Պաւղոս», *որից կարող ենք ենթադրել, որ Պօղոսը միաժամանակ նաեւ ձեռագրի ծաղկող է: Յետագայի յիշատակարանից (թերթ 135բ) պարզւում է, որ ոմն Մկրտիչ քահանայ պարոն Դեղի եւ նրա որդի Թաթուլի օգնութեամբ գնել եւ օտարների ձեռքից ազատել է ձեռագիրը:*

Մինչեւ այս ձեռագրին անդրադառնալը համառօտ ներկայացնենք Պօղոս վարդապետին: Նրա մասին մատենագրական վկայութիւնները վերաբերում են 1267-1321 թթ: Կիլիկիայի Ակներ վանքում վարդապետական աստիճան ստանալուց յետոյ նա գալիս է Գլաձոր, 1307 թ. Աւետարան է ընդօրինակում[12], *որը ծաղկում է Թորոս Տարօնացին: Նոյն թուականին նա յիշւում է Նորավանքում Յովհաննէս Օրբէլի պատուիրած ձեռագրի վրայ Մոմիկի հետ աշխատելիս*[13]: *Այսինքն՝ Գլաձորում Եսայի Նշեցին եւ Գլաձորի համալսարանը*, Լոս Անջելէս, 1988, էջ 209-210, նոյնի՝ *Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները*, Լիզպոն, 1998, մաս 2, էջ 75-77. *Ն. Մովսիսեան, Հայ նկարողներ*,- Սիոն, 1986, Է-Թ, էջ 178-179. *Ա. Գեւորգեան, Վայոց Ձորի եւ Որոտանի մանրանկարչութիւնը 13-17-րդ դարերում*, Երեւան, 2003, էջ 113-125):

ղոսը, հնարաւոր է, եղել է նաեւ Նորավանքում, որտեղից 1310 թ. գնացել է Արատէս: Որպէս հմուտ գրիչ ու նկարիչ Պօղոսը շրջել է վանքից վանք: 1311 թ. Հերմոնի վանքում ժողովածոյ[14] *ընդօրինակելուց յետոյ նրան դարձեալ տեսնում ենք Գլաձորում, որտեղ 1313 եւ 1314 թուականներին երկու Աւետարան է ընդօրինակում (ՄՄ, ձեռ. թիւ 7842, թիւ 9150. երկրորդից պահպանուել է միայն յիշատակարանը)*[15]: *Վերջին ձեռագրի յիշատակարանից պարզ է, որ նա արդէն տարիքն առած էր («...վատեալ ի լուսոյ եւ պակասեալ ի զաւրութենէ, դողդոջեալ ձեռաւք եւ մտաւք...»): Պօղոս վարդապետի յիշատակութեամբ վերջին ձեռագիրը 1321 թ. Վայոց ձորում գրչագրած Աւետարանն է*[16]:

Արատէսում ընդօրինակուած ՄՄ թիւ 4446 ձեռագրի կազմութիւնը խախտուած է. 1ա թերթում Մատթէոսի անուանաթերթի մի մասն է (վատ պահպանուած), որն աչքի է ընկնում ոճական գեղեցիկ կատարումով, կապոյտի ու կարմիրի հետ ոսկու նուրբ զուգորդմամբ: Ճակատազարդի կենտրոնում վարդեակ է, կողքերին՝ ոլո-

12 Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարան, ձեռ. թիւ 1917, տե՛ս **S. Der-Nersessian**, *Manuscripts arméniens illustrés des XIIe, XIIIe et XIVe siècles de la bibliothèque des pères Mekhitaristes de Venise*, P., 1936, p. 179-180.

13 Հարթֆորդ, Քէյս Մեմորիալ գրադարան, Arm. 3, տե՛ս *A catalogue of medieval armenian manuscripts in the United States*, by A. Sanjian, Los Angeles, 1976, p. 81.

14 *Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից*, կազմեցին՝ Ս. Մուրատեան, Ն. Մարտիրոսեան, Երուս., 1967, ձեռ. թիւ 14, էջ 17:

15 Գ. Յովսէփեանը, Ա. Աւետիսեանը եւ Լ. Խաչերեանը միայն այս երկու ձեռագիրն են վերագրել Պօղոսին, Ն. արք. Մովսիսեանը՝ ութ ձեռագիր, իսկ Ա. Գեւորգեանը դրանց աւելացնում է եւս վեցը՝ Պօղոս վարդապետի գրչագրած եւ միեւնոյն ժամանակ մի քանիսը ծաղկած ձեռագրերի թիւը հասցնելով տասնչորսի (տե՛ս *Գ. Յովսէփեան*, նշ. աշխ., էջ 177, 266-267. *Ա. Աւետիսեան, Մանրանկարչութեան Գլաձորի դպրոցը*, Երեւան, 1971, էջ 80-83. *Լ. Խաչերեան, Եսայի Նշեցին եւ Գլաձորի համալսարանը*, Լոս Անջելէս, 1988, էջ 209-210, նոյնի՝ *Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները*, Լիզպոն, 1998, մաս 2, էջ 75-77. *Ն. Մովսիսեան, Հայ նկարողներ*,- Սիոն, 1986, Է-Թ, էջ 178-179. *Ա. Գեւորգեան, Վայոց Ձորի եւ Որոտանի մանրանկարչութիւնը 13-17-րդ դարերում*, Երեւան, 2003, էջ 113-125):

16 *ԺԴ դարի յիշատակարաններ*, էջ 170:

digitised by ARAR@

բազմոյտ հիւսուածքազարդերի մէջ, մէկական թագակիր յուշկապարիկներ են պատկերուած[17]:

Գլխազարդի վրայ տեսանելի են կիսով չափ պահպանուած զոյգ սիրամարգերը: Աւետարանը սկսւում է Մատթէոսի խորհրդանիշ մարդագիր գլխատառով, որին յաջորդում են թռչնագիր տառեր: Ձեռագրի միակ պահպանուած ամբողջական պատկերը ներկայացնում է Ղուկաս աւետարանչին (թերթ 31բ): Հազիւ նկատելի է նաեւ Ղուկասի անուանաթերթի մի փոքր հատուածը: Մանրանկարում Ղուկասը պատկերուած է աշխատանքի պահին խորհելիս՝ սեւեռուն հայեացքն ինչ-որ կէտի յառած (նկ. 1): Ձախ ձեռքը պահել է բերանի մօտ, իսկ աջով գրում է ծնկին դրած գրանիւթի վրայ (տեքստի ուղղութիւնը վարից վեր է): Հագին ունի կանաչաւուն պարեգօտ եւ կապոյտ վերնազգեստ, ոտքերին՝ սանդալներ: Հագուստի ծաւալային մշակման հետեւանքով աւետարանիչը խոշորամարմին է թւում: Նստած է ցածր աթոռակին դրուած երկարաւուն մեծ բարձի (մութակայ) վրայ, լայն բացուած ոտքերի տակ երկու փոքրիկ գորգ կայ: Ղուկասի դէմքն առանձնանում է մեծ արտայայտչականութեամբ. խոշոր նշաձեւ աչքերը, երկար յօնքերը, նրբօրէն գծագրուած քիթը, սրածայր թաւ մօրուքը, այտերի կարմրաներկը ստեղծում են անհատականացուած մի կերպար, որն ամբողջացնում է մազերի բաւական իւրօրինակ յարդարանքը՝ բաղկացած նուրբ ու բարակ գծերից, որ խոշոր ալիքներով միահիւսւում են իրար: Մանրանկարի ֆոնը հարթային է՝ նախշազարդ երիզով բաժանուած երկու մասի: Վերին անկիւններում զոյգ կամարները հանգչում են բարակ սիւներին, որոնց վրայ փաթաթուել են վարագոյրները (կարմիր եւ մանուշակագոյն): Ներքեւում, կամարաձեւ բացուածքից բացի, ոչինչ չկայ:

Անյայտ ծաղկողի (հաւանաբար՝ Պօղոսի) պատկերած այս նկարը հնարաւորութիւն է տալիս նրան վերագրելու նաեւ մէկ այլ ձեռագիր՝ Վիեննայի Մխիթարեան միաբանութիւնում պահուող թիւ 460 Աւետարանը: Ձեռագրի ստեղծման տեղն ու ժամանակը գլխաւոր յիշատակարանի բացակայութեան պատճառով անյայտ են, սակայն ձեռագրում կայ յետագայի յիշատակարան մատեանի գնման մասին. «Կատարեցաւ սուրբ Աւետարանս այս ի թվ. ՉԿԴ (1315 թ.): Ես Սարգիս Շահիս որդի, որ ստացա ի հալալ արդեանց եւ գնեցի զսա Պօղոս վարդապետէ Ծ (50) դկ [դահեկանի] վասն հոգոյ որ յիշատակ իմ հանապազ»[18]: Ինչպէս տեսնում ենք, 1315 թ. Շահի որդի Սարգիսը ձեռագիրը 60 դահեկանով գնել է Պօղոս վարդապետից, որը, կարծում ենք, մեզ յայտնի մանրանկարիչ Պօղոս վարդապետն է:

Ի տարբերութիւն Մատենադարանի ձեռագրի՝ այս մատեանը պարունակում է ութ խորան, չորս կիսախորան եւ բազում լուսանցազարդեր ու զարդագրեր: Պահպանուած միակ պատկերը՝ Մարկոս աւետարանչի, ինչպէս նշուած է ձեռագրի նկարագրութեան մէջ, գրքից հանուած է եղել (թերթ 99բ, նկ. 2): Երկու ձեռագրերի (ՄՄ, թիւ 4446, Վիեննա, թիւ 460) աւետարանիչների պատկերների ու անուանաթերթերի համեմատութիւնը վկայում է, որ

17 Թագակիր յուշկապարիկի մոտիւը յայտնի է սասանեան շրջանից: Այն առկայ է եւ՝ ձեռագրերում, եւ՝ ճարտարապետական կառոյցների յարդարանքներում, եւ՝ խեցեգործութեան մէջ (տե՛ս **В. Даркевич**, *Светское искусство Византии*, М., 1975, с. 194-195):

18 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, կազմեց **Վ. Տաշեան**, գիրք Ա., Վիեննա, 1895, էջ 934. *Հայ ձեռագիրներ Մխիթարեան Մատենադարանի ի Վիեննա*, կազմեցին **Հայդէ** եւ **Հելմուտ Բուշհաուզէն**, Վիեննա, 1978, էջ 29: **Heide und Helmut Buschhausen**, *Armenische Handschriften der Mechitharisten Congregation in Wien*, Wien, 1981, S. 120-121:

դրանք միեւնոյն նկարչի վրձնին են պատկանում: Չի բացառւում նաեւ, որ Մարկոսի պատկերը ժամանակին մասն է կազմել ՄՄ թիւ 4446 ձեռագրի: Դժուար չէ տեսնել երկու աւետարանիչների պատկերներն իրար կապող յատկանիշները (դիմագծերը, մազերի միատիպ մշակումը, հագուստի մոդելաւորումը, որ ներքեւում աւարտւում է ատամնաւոր ծալքերով, յետնախորքի միեւնոյն ճարտարապետական լուծումը, մանրանկարի շրջանակի զարդանախշը, օգտագործուած գոյները): Ոճաւորման գրաֆիկական զգացողութիւնը, կատարման մոնումենտալութիւնը նրանց որոշակի քանդակային տեսք են հաղորդում: Մարկոս աւետարանիչն առանձնանում է իր դիրքով. նա արեւելեան սովորոյթներին բնորոշ ծալապատիկ ձեւով նստած է անմիջապէս մութակայի վրայ:

Այս պատկերները որոշ յատկանիշներով զուգահեռներ ունեն Կալիֆոռնիայի համալսարանում պահուող Գլաձորի Աւետարանի հետ (1300-1307 թթ., Կալիֆոռնիայի համալսարան, MS.1), որի նկարազարդմանը մասնակցել է մի քանի նկարչ[19]: Մեր մանրանկարները մօտ են ձեռագիրը ծաղկած «երկրորդ» նկարչին, որ աշխատել է Եղեգիսում կամ Նորավանքում եւ որին յարում են նաեւ Մոմիկի աշակերտները[20]: Մոմիկի ոճն էլ իր հերթին առնչութիւն ունի Եղեգիսի նկարիչ Սարգսի 1306 թ. նկարազարդած Աւետարանի հետ:

ԺԳ.-ԺԵ. դարերում Օրբէլեան իշխանների նստավայր Եղեգիսը, որը գտնւում է Արատէսից հարաւ-արեւմուտք, եւս ճանաչուած է եղել որպէս մանրանկարչութեան կենտրոն: Միանգամայն տրամաբանական է, որ այս կենտրոնները (Նորավանք, Արատէս, Եղեգիս), որ իրարից հեռու չէին, սերտօրէն կապուած էին միմեանց հետ: Նորավանքի եւ Եղեգիսի ոճը մասամբ ասոցացւում է Օրբէլեանների հետ, մինչդեռ Գլաձորինը՝ Պռոշեանների[21]: Այդ դպրոցներում ոճական ուղղութիւնների տարբերութիւնը մասամբ բացատրւում է դրանց՝ տարբեր իշխանական տների պատկանելութեամբ[22]: Չնայած այս հանգամանքին՝ Օրբէլեանները հովանաւորում էին Գլաձորի համալսարանը, նաեւ՝ Վերին Նորավանքի դպրոցն ու գրչատունը:

ԺԳ. դարի վերջում եւ ԺԴ. դարի սկզբում Սիւնիքի նկարիչները ձեռագրերի խորանները, անուանաթերթերն ու ճակատազարդերը ձեւաւորելիս մեծապէս օգտ-

19 Ձեռագրի մասին տե՛ս **A. Sanjian**, *The Gladzor book of the early fourteenth century at U.C.L.A*, p. 24-32. **T. Mathews**, *The Gladzor gospel book of U.S.L.A*,- Հայ արուեստին նուիրուած միջազգային երկրորդ սիմպոզիում, Երեւան, 1978, էջ 33-38. **A. Sanjian**, *Medieval Armenian manuscripts at the University of California*, Los Angeles, 1999, p. 46-63. **T. Mathews, A. Sanjian**, *Armenian Gospel iconography, The tradition of the Gladzor gospel*, Washington, 1991. **T. Mathews, R. Wieck**, *Treasures in Heaven*, New York, 1994, p. 91-94. **T. Mathews, A. Taylor**, *The Armenian gospels of Gladzor*, Los Angeles, 2001:

20 Ս. Տէր-Ներսէսեանը ցոյց է տուել, որ Մոմիկը Նորավանքի հետ կապ ունի եւ չէր կարող Գլաձորի դպրոցի ներկայացուցիչ լինել, ինչպէս կարծել է Ա. Աւետիսեանը (տե՛ս **Ա. Աւետիսեան**, նշ. աշխ., էջ 49-80. **S. Der-Nersessian**, *L'évangile du Maténadaran -10525 de l'an 1306 contribution a l'étude de la miniature en Siwnik au XIV siècle*,- *Revue des études Arméniens*, P., 1982, t. XVI, p. 337-339. **T. Mathews, A. Sanjian**, *Armenian Gospel iconography*, p. 61):

21 Ս. Տէր-Ներսէսեանը Եղեգիս-Նորավանք ոճի հետ կապում է մի քանի ձեռագիր (Նիւ Եորք, Մետրոպոլիտենի արուեստի թանգարան, 38. 171.2, Պիերպոն Մորգան գրադարան, MS 620) եւ այն առաւել ամբողջական նկարագրելու համար դրա ծագման աղբիւրը գտնում Անիի ԺԳ. դարի նկարիչ Իգնատիոսի մօտ, միւս կողմից՝ հետեւում է դրա զարգացմանը Թաւրիզի Կիրակոսի աշխատանքներում մէկ դար յետոյ (տե՛ս **T. Mathews, A. Sanjian**, op. cit., p. 63, **S. Der-Nersessian, A. Mekhitarian**, *Armenian miniatures from Isfahan*, Belgium, 1986, p. 60-88, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հտ. Ա., էջ 66, 205):

22 **T. Mathews, A. Sanjian**, op. cit., p. 62:

ւում էին Կիլիկիայի մանրանկարչական ձեռքբերումներից: Կիլիկեան յարդարանքի հետ են կապւում ոսկով ուրուագծումը, պարուրաձեւ ոլորազարդերը՝ եռամաս սրածայր նախշերով, ճակատազարդի արտաքին անկիւնների զարդամոտիւները, որոնք կիրառուել են Վայոց ձորի շատ գրչատների ձեռագրերում[23] (նաեւ ՄՄ թիւ 4446, Վիեննայի թիւ 460 ձեռագրերի անուանաթերթերը): Այդ ազդեցութիւնը պայմանաւորուած էր նաեւ այն հանգամանքով, որ ԺԴ. դարում տեսնում ենք կիլիկեան ձեռագրերի նուիրաբերման դէպքեր բուն Հայաստանի վանքերին կամ հոգեւորականներին[24]: Բացի այդ, Կիլիկիայից Վայոց ձոր եւ մասնաւորապէս՝ Գլաձորի համալսարան ուսանելու էին գալիս արդէն գրչութեան արուեստում հմտացած մարդիկ (Մատթէոս, Պօղոս, Տիրատուր Կիլիկեցիներ եւ այլք):

Իր ոճով, գծանկարի նրբութեամբ, ոսկէ յետնախորքի վրայ փայլող գոյներով եւ բուսակենդանական զարդաձեւերի ընտրութեամբ ու մշակմամբ կիլիկեան աւանդոյթներին է հետեւում Սիւնիքում 1300 թ. Յովհաննէս Օրբէլեանի պատուիրած ձեռագրի առատ ձեւաւորումը, որը կիլիկեան աւանդոյթների՝ դէպի Հայաստան ներթափանցման համար կարեւոր օղակ է (Նոր Ջուղա, ձեռ. թիւ 477)[25]: Այս երեւոյթին նպաստում էր յատկապէս Կիլիկիայից Գլաձոր եկած վարպետների ազդեցութիւնը, որոնք իրենց հերթին դպրոցներ հիմնեցին Վայոց ձորի տարբեր վայրերում՝ նորովի շարունակելով մանրանկարչական աւանդոյթները[26]: Սակայն, ի տարբերութիւն Կիլիկիայի, որտեղ ԺԴ. դարում նոր միայն բնութագրական է դառնում ցայտուն արտայայտուած արեւելեան միտումը, բուն Հայաստանում արեւելեան աւանդոյթները երբեք չեն դադարել առաջատար դեր խաղալուց[27]: Դրանք առաւել ակնառու կերպով արտայայտուեցին յատկապէս սելջուկեան արշաւանքներից յետոյ (ԺԱ. դարի կէս – ԺԳ. դար): Վայոց ձորի քանդակագործութիւնը, որ ծաղկման հասաւ ԺԴ. դարում, եւս հիմնուած էր արեւելեան աւանդոյթների վրայ[28]:

Այս տարածաշրջանի արուեստի տարբերակող գծերից մէկն էլ քանդակագործութեան եւ մանրանկարչութեան միջեւ սերտ կապն էր, որոնք մի շարք յատկանիշներով մօտենում են իրար[29]: Ժամանակի ընթացքում միջմշակութային փոխառնչութիւնների զարգացման արդիւնքում տեղական ազգային աւանդոյթներին միահիւսուեցին մշակութային տարբեր շերտեր՝ նպաստելով ինքնատիպ մի ոճի ստեղծման,

23 Կիլիկեան մանրանկարչութեան հետ փոխառնչութիւնների մասին տե՛ս *Ս. Մանուկեան, Անուանաթերթերը Մոմիկի ծաղկած ձեռագրում*,- Մոմիկ-750, Զեկուցումների ժողովածոյ, Երեւան, 2011, էջ 56-57:

24 **В. Казарян, С. Манукян**, *Матенадаран*, М., 1991, с. 187.

25 **S. Der-Nersessian, A. Mekhitarian**, op. cit., p. 64, *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, հտ. Ա, էջ 51:

26 Տիրատուր Կիլիկեցին ղեկավարեց Հերմոնի դպրոցը, Յովհաննէս Որոտնեցին՝ Տաթեւի, Դաւիթ ռաբունապետը՝ Վերին Նորավանքի (որին կ՝անդրադառնանք ստորեւ) եւ այլն:

27 **В. Лазарев**, *История византийской живописи*, т. I, М., 1986, с. 184.

28 Արեւելքին բնորոշ մեծ, նշաձեւ աչքերի կիրառումը հանդիպում է վայոցձորեան հետեւեալ քանդակներում՝ 1273 թ. Եղեգիսի մահարձանի տիմպան, 1274 թ. Եղեգիսի իշխանական պալատ, 1321 թ. Սպիտակաւորի բարձրաքանդակ: Այդ քանդակների մասին տե՛ս *Պ. Դոնաբեդեան, Նորավանքի քանդակագործական յուշարձանի առանձնայատկութիւնները եւ ստեղծման ժամանակը*,- Լրաբեր, 1979, թիւ 11, էջ 101. **П. Донабедян**, *Тимпан Ехегиского надгробного памятника 1273*,- ՊԲՀ, 1979, թիւ 3, էջ 189-206:

29 Այն, որ Արատէսն ու Նորավանքը կապուած են եղել, վկայում է նաեւ Արատէսի գաւթի արեւմտեան շքամուտքի ճակատակալ քարը (Աստուածամայրը մանկան հետ՝ երկու կողմերում կտիտորներ. չի պահպանուել), որը յարում է Մոմիկի գործերին:

որպիսին տեսնում ենք Արատէսում, Նորավանքում ու Եղեգիսում: Սակայն մշակութային այս ծաղկումը ԺԴ. դարի վերջերին Լենկ Թեմուրի արշաւանքներով պայմանաւորուած՝ խաթարւում է եւ յանգեցնում իշխանական տների քայքայմանը, որի պատճառով մեզ հասած գրաւոր աղբիւրներն Արատէսի մասին լռում են մինչեւ ԺԶ. դարը: Այս շրջանում՝ 1515 թ., Կարապետի պատուէրով Ներսէս աբեղան Աւետարան է գրում «...ընծայ եւ ներ յաստուածապահ եւ յանեղաշէն գեղն ի Ցարատենց կոչեցեալ, ի դուռն սբ. Գրիգորի» (ՄՄ, ձեռ. թիւ 3867, թ. 315ա): Ցայտնի է Արատէսի վանքում Ստեփանոս աբեղայի պատուիրած եւ Սրապիոն աբեղայի ընդօրինակած մի ձեռագիր եւս, որի գրչութեան ժամանակը յայտնի չէ, սակայն 1586 թ. Իսրայէլ երէցը Ցղուերծ գիւղում ծաղկել է այն՝ Յովհաննէս աբեղայի նախաձեռնութեամբ (ՄՄ, ձեռ. թիւ 3867):

Այսպիսով՝ վերոյիշեալ սակաւաթիւ աղբիւրները փաստում են, որ Արատէսի վանքը, Օրբէլեանների ամառանոց-նստավայրը լինելուց բացի, ԺԳ. դարից սկսած եղել է նաեւ գրչութեան կենտրոն ու վարդապետարան՝ իր շուրջը համախմբելով բեղումնաւոր արուեստագէտների, եւ կապեր է ունեցել այլ մշակութային կենտրոնների հետ:

Այժմ անդրադառնանք Օրբէլեանների եպիսկոպոսարանի կրթամշակութային միւս կենտրոնի՝ Վերին Նորավանքի գործունէութեանը:

Քանի որ Վերին Նորավանքի տեղորոշումը դեռեւս յայտնի չէ, ստիպուած ենք բաւարարուել պահպանուած ձեռագրերի յիշատակարանների եւ պատմիչների կցկտուր տեղեկութիւններով: Ինչպէս տեսանք, երկու Նորավանքների մասին իր պատմութեան մէջ յիշատակում է դեռեւս Ստեփանոս Օրբէլեանը:

Վերին Նորավանքում գրուած մեզ յայտնի ձեռագրերն ընդգրկում են 1312-1495 թթ.: Սակայն վանքն առաջին անգամ յիշատակւում է Սիւնեաց մետրապոլիտ Յովհաննէս Օրբէլի գրչագրած 1302 թ. Աւետարանում (Նոր Ջուղա, ձեռ. թիւ 243), համաձայն որի յիշատակարանի՝ վերջինս Դաւիթ վարդապետի խնդրանքով Վերին Նորավանքին չորս գիւղ է տալիս[30]: Ինչպէս պարզւում է, Դաւիթը եղել է Գլաձորի համալսարանի բաբունապետերից, որը յետագայում ղեկավարել է Վերին Նորավանքի դպրոցը[31]: Նրա պատուէրով էր գրուել արդէն յիշատակուած՝ Պօղոսի 1307 թ. Աւետարանը. «Գրեցաւ սա հրամանաւ եւ արդեամբ մեծ վարժապետին Դաւթի» *(Վենետիկ, ձեռ. թիւ 1917, թերթ 293): Ուշագրաւ է, որ մի շարք յիշատակարաններում Դաւթի անունը հանդիպում է Եսայի Նչեցու հետ.* «...ի վարժապետութեան մեծին Եսայեայ եւ եռամեծին Դաւթայ» *(ՄՄ, ձեռ. թիւ 3393, Աւետարան, 1309 թ., թերթ 258ա): 1312 թ. Դաւիթը Գլաձորում ստանում է Ներսէս Լամբրոնացու Սաղմոսների մեկնութիւնը (ՄՄ, ձեռ. թիւ 4679): Նոյն թուականին նրան տեսնում ենք Վերին Նորավանքի դպրոցի ղեկավարի պաշտօնում.* «...գրեցաւ սուրբ աւետարանս ի գաւառիս յԵղեգեաց, ի վանս, որ Վերի Նորավանս կոչի... յառաջնոր-

30 *Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, էջ 709:

31 Դաւիթը մասնակցել է նաեւ 1295 թ. Ստ. Օրբէլեանի գլխաւորութեամբ գումարուած ժողովին: Նրա անունը կայ 1307 թ. Կոստանդին Կեսարացի կաթողիկոսին ուղղուած սիւնեցիների նամակի ստորագրողների մէջ՝ Եսայի Նչեցու հետ միասին (տե՛ս *Հ. Ղեւոնդ Ալիշան*, էջ 134-135. *Ցուցակ ձեռագրաց ի Վիեննա*, էջ 180): Հնարաւոր է, որ այս նոյն Դաւիթն է յիշատակուած ՄՄ թիւ 1981 ձեռագրում, որի յիշատակարանը (թերթ 91բ) հատուածաբար է պահպանուել. «Երջանիկ եւ զբազմաշնորհ զերիցս եր[անեալ ռաբու]նապետն Դ[աւի]թ, յիշեցէք ի Քրիստոս» (*ԺԴ դարի յիշատակարաններ*, էջ 335. *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Զ, Երեւան, 2012, էջ 822. առաջինում նշւում է ԺԴ. դար, երկրորդում՝ ԺԳ. դար):

digitised by ARAR@

դութեան սուրբ ռաբունապետիս Դաւթի»[32]: Վերին Նորավանքում Դաւիթը յիշատակւում է նաեւ Մատթէոս քահանայի գրչագրած 1318 թ. Ժողովածոյի մէջ (Նոր Ջուղա, ձեռ. թիւ 98)[33]: 1321 թ. Դաւիթը կրկին Գլաձորում է, որտեղ գրիչ Կիւրոնը գրում է. «...ի վարժապետութեան սուրբ եւ բազմերջանիկ քաջ հոետորաց Հայոց՝ երկուց ամոլաց ճշմարիտ հաւատոյ մերոց Դաւթի եւ Եսայեայ» (Բրիտանական թանգարան, ձեռ. add. 15.411)[34]: Այս հանգամանքը փաստում է, որ Դաւիթն իր ժամանակի նշանաւոր անձանցից է եղել եւ մեծ հեղինակութիւն վայելել: Նրա ուսուցչապետութիւնը բնութագրող համապարփակ ներբող է պահպանուել Ղեւոնդ Ալիշանին յայտնի մի գրչագրում.

...արի եւ քաջ հայր պատուական
Պուետիկոս աստուածաբան
Տէր վարդապետ հրաշագան
Պատմող բանին անհունական...[35]:

Մինչեւ երբ է Դաւիթը ղեկավարել Վերին Նորավանքի դպրոցը, ստոյգ յայտնի չէ, բայց 1329 թ. նա արդէն կենդանի չէր, եւ Վերին Նորավանքի առաջնորդ է յիշւում Գլաձորի համալսարանում Յովհաննէս ռաբունապետին աշակերտած Կիւրիոնը. «...սբ. ռաբունապետին Կիւրոնի, առաջնորդի մեծ մենաստանիս Վերի Նորավանք կոչեցելոյ, սպասաւորի սբ. գերեզմանի ռաբունապետին Դաւթի...»[36]: 1333 թ. նա այստեղ եւս մի ձեռագիր է գրում՝ յիշատակելով Եսայի դպրապետի մօտ ուսանելու մասին (ՄՄ, ձեռ. թիւ 5651, թերթ 228բ)[37]: Մինչեւ Վերին Նորավանքում ուսումնամանկավարժական գործունէութիւն ծաւալելը Կիւրիոնը 1311 թ. գրչագրում է երկու ձեռագիր, որոնցում իրեն կոչում է «սուտանուն սպասաւոր բանի» (ՄՄ, ձեռ. թիւ 1460, թերթ 209բ)[38] եւ «զբազմավեր ծրող» (ՄՄ, ձեռ. թիւ 3463)[39]:

Վերոյիշեալ տեղեկութիւնները վկայում են, որ Գլաձորն ու Վերին Նորավանքը, չնայած պատկանել են իշխանական տարբեր տների, համագործակցել են. նրանց սաները սովորել են ե՛ւ Գլաձորում, ե՛ւ Վերին Նորավանքում ու միասին են յիշատակւում այդ վայրերում ընդօրինակուած ձեռագրերում: Այդ փաստի օգտին է խօսում 1360 թ. Երուսաղէմում գրուած Մաշտոցը, որի յիշատակարանում նշւում է, որ եպիսկոպոս Սարգիսը կրթութիւն է ստացել ե՛ւ Գլաձորում, ե՛ւ Վերին Նորավանքում՝ Կիւրիոնի մօտ. «...սնեալ եւ վարժեալ յարեւելս ի մայրն իմաստից եւ յերկրորդ յԱթէն ի Վայոյ ձորն, ի հոչակաւոր եւ յաստուածաբնակ վանսն ի սուրբ Սիոն Վերին Նորավանս, յառաջնորդութեան մեծին ռաբունոյն Կիւրիոնին»[40]:

Օրբէլեանները հովանաւորել են նաեւ Գլաձորի աւանդոյթները շարունակող Հերմոնի վանքը, որն աւելի մօտ էր Վերին Նորավանքին:

1456 թ. Ճառընտիրը ծաղկած Եսային, որը Մաթէոս գրչի կողմից յիշւում է «որպէս բանիբուն փիլիսոփայ եւ անհաս ընկարող»

32 ԺԴ դարի յիշատակարաններ, էջ 90:

33 Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հտ. Ա, էջ 744:

34 **F. Conybeare**, *A catalogue of the Armenian manuscripts in the British museum*, Oxford, 1913, p. 22.

35 Ղեւոնդ Ալիշան, էջ 135:

36 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, կազմեց Հ. Ն. Պողարեան, Երուս., 1967, հտ. Բ, էջ 316, ձեռ. թիւ 391:

37 ԺԴ դարի յիշատակարաններ, էջ 257:

38 Նոյն տեղում, էջ 82. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, կազմեցին Ա. Քէօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քէօսէեան, հտ. Դ, Երեւան, 2008, էջ 1317:

39 ԺԴ դարի յիշատակարաններ, էջ 83:

40 Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. Է, աշխ. Ն. արք. Պողարեանի, Երուսաղէմ, 1974, էջ 217-218, ձեռ. թիւ 2156:

(ՄՄ, ձեռ. թիւ 993, թերթ 768բ)[41], հանդիպում է նաեւ Հերմոնի եւ Եղեգիսի գրչատներում: 1470 եւ 1471 թուականներին գրուած երկու ձեռագրեր վկայում են, որ Վերին Նորավանքում գոյութիւն է ունեցել Մեղուս (Մեղուանց) անունով վանք[42]: 1476 թ. Վերին Նորավանքի առաջնորդն է Սարգիս «արի եւ քաջ» ռաբունապետը: Ձեռագրի յիշատակարանն արժեւորւում է նաեւ նրանով, որ այստեղ յիշատակւում են վանքի նահատակուած ուսուցչապետեր Դաւիթը եւ Առաքելը: Ուշագրաւ է Պօղոս գրչի՝ վանքի բնութագրումը. «...սուրբ եւ ի հոչակաւոր մենաստանիս Վերի Նորավանք կոչեցեալ... որ ճշմարիտ հար եւ նման է Վերին Երուսաղէմի...» (ՄՄ, ձեռ. թիւ 6808)[43]: Իսկ 1484 թ. Աւետարանում գրիչ Գրիգորը վանքն անուանում է «երկնահանգ[էտ] եւ [մեծ]ահոչակ սուրբ ուխտ»[44]: Այս նոյն Գրիգորը 1487 թ. գրչագրել է եւս մի ձեռագիր «ի յերկնահանգէտ եւ գերահոչակ սուրբ ուխտս Վերի Նորավանք, որ կոչի Վերին Երուսաղէմ» (թերթ 528բ): Ձեռագիրը պահւում է ԱՄՆ-ի Կոնգրեսի ազգային գրադարանում, որ վերջերս յայտնի դարձաւ մեր ուսումնասիրութեան շրջանակներում (Մերձաւոր Արեւելքի բաժին, 003.00.00)[45]:

Յաջորդ ձեռագիրը Վերին Նորավանքից Շարական է՝ գրուած 1490 թ. Աբրահամ գրչի ձեռքով[46], որը վկայում է այստեղ երբեւէ գործող չորրորդ եկեղեցու՝ Սբ. Գրիգորի առկայութիւնը[47]: 1495 թ. Բոլորաբերդի յայտնի գրիչ-մանրանկարիչ, ռաբունապետ Աբրահամի պատուէրով Վերին Նորավանքում Աւետարան է գրւում, որը նա յետագայում ծաղկում է Տաթեւի վանքում՝ 1496-1502 թթ. ընթացքում (ՄՄ, ձեռ. թիւ 5303)[48]:

Յաւօք, զրկուած լինելով դրսի հաւաքածոներում գտնուող նկարազարդ ձեռագրերն ուսումնասիրելու հնարաւորութիւնից (բացառութեամբ Կոնգրեսի ազգային գրադարանում պահուողի), Վերին Նորավանքի մանրանկարչական դպրոցին ծանօթանում ենք այս չորս ձեռագրերի միջոցով՝ 1333 թ. Աւետարան (ՄՄ, թիւ 5651), 1456 թ. Ճառընտիր (ՄՄ, թիւ 993), 1476 թ. Աւետարան (ՄՄ, թիւ 6808), 1487 թ. Աւետարան (Կոնգրեսի ազգային գրադ., թիւ 003.00.00):

Դրանցում նկատւում է ոճական երկու ուղղութիւն. թիւ 5651 ձեռագրում,

41 ԺԴ դարի յիշատակարաններ, էջ 65-66. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Գ, Երեւան, 2007, էջ 167:

42 Ղ. Փիրղալեմեան, Նշխարք պատմութեան Հայոց, հտ. Ա (ՄՄ, ձեռ. թիւ 6273), էջ 311-312. ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկեան, հտ. Բ, Երեւան, 1958, էջ 299, էջ 318:

43 ԺԵ դարի յիշատակարաններ, հտ. Բ, էջ 399:

44 Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, կազմեց՝ Հ. Աճառեան, Վիեննա, 1910, էջ 16, ձեռ. թիւ 15. ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, հտ. Գ (1481-1500), կազմեց Լ. Ս. Խաչիկեանը, Երեւան, 1967, էջ 57:

45 http://www.loc.gov

46 **Л. Меликсет-Беков**, *Рукопись Шаракана XV века открытая в Одессе*, Тифлис, 1913. ԺԵ դարի յիշատակարաններ, հտ. Գ, էջ 147-148:

47 Միւս յիշատակարաններում նշուած են միայն Սբ. Սիոն եւ Սբ. Աստուածածին (հանդիպում է նաեւ Մայր լուսոյ, Լուսոյ մօր տարբերակով, որ միջնադարում բնութագրել է Մարիամ Աստուածածնին) եկեղեցիները:

48 Աբրահամ վարդապետ Մկրտչեանը նոյնացնում է Արատէսի վանքը Վերին Նորավանքին (տե՛ս **Ա. վրդ. Մկրտչեան**, *Էջեր Սիւնեաց աթոռի պատմութիւնից*, Էջմիածին, 1995, էջ 91-100): Սակայն Ստեփանոս Օրբէլեանն իր պատմութեան մէջ երկու վանքերը իրարից անջատ է նշում, ինչպէս տեսանք վերեւում: Բացի այդ, Վերին Նորավանքի յիշատակութեամբ ձեռագրերում հանդիպող Դաւիթ, Կիւրիոն, Առաքել եւ Սարգիս ռաբունապետերի անունները, ինչպէս նաեւ՝ Մեղուս կոչուած եկեղեցին, չկան Արատէսի մասին վկայութիւններում եւ հակառակը՝ Արատէսի գործիչների անունները չեն հանդիպում Վերին Նորավանքում: Համընկնում են միայն երկու վայրերում գոյութիւն ունեցած Սբ. Սիոն, Սբ. Աստուածածին եւ Սբ. Գրիգոր եկեղեցիների անունները:

որը պարունակում է նկարազարդ չորս անուանաթերթեր, դեռեւս զգացւում է կիլիկեան ոճի ազդեցութիւնը, ուր իշխում են կապոյտ, կարմիր ու կանաչ գոյները: Ձնայած ձեռագրի փոքր չափերին (12,5(8))՝ այն կատարուած է վարպետ ծաղկողի ձեռքով: Բացի Յովհաննէսի անուանաթերթի ճակատազարդից, որը Պ-աձեւ է՝ բիւզանդական մշակոյթից փոխառնուած, մնացած երեքն ունեն եռանիստ կտրուածք՝ արտացոլելով արեւելեան ճարտարապետական ձեւերը: Մատթէոսի եւ Յովհաննէսի ճակատազարդերը լցուած են բուսածաղկային մոտիւներով: Մարկոսի ճակատազարդում՝ առիւծամարմին մարդադէմ արարածներ են (սֆինքս)՝ թեւաւոր ու թագակիր[49] (նկ. 3), Ղուկասի մօտ՝ գլուխները ետ շրջած հանդիպակաց սիրամարգեր՝ փարթամ պոչերով, կենդանի ու շարժուն (նկ. 4): Աւետարանական տեքստերի սկզբնատառերը սովորաբար կազմւում են աւետարանիչների խորհրդանշաններով: Մարդագիր գլխատառով, որպէս կանոն, սկսւում է Մատթէոսի Աւետարանը, սակայն մեր օրինակում այն յայտնւում է Ղուկասի անուանաթերթում: Իսկ Մարկոսի անուանաթերթում գլխատառը կազմուած է ոչ թէ զիմահայեաց զոյգ առիւծներից, այլ յուշկապարիկներից: Ուշագրաւ է, որ բացակայում է աջ լուսանցազարդը, մի բաղադրիչ, որը ԺԲ. դարից սկսած անուանաթերթի անբաժանելի մասն էր[50]:

Ոճական միւս ուղղութիւնը, որ ի յայտ է գալիս արդէն ԺԵ. դարում ստեղծուած ձեռագրերում, կապւում է տեղական զարդանկարչական արուեստի հետ եւ յատկանշւում է աւելի պարզ ձեւերով: Երկրում ծաւալուող բարդ յարաբերութիւնները, ֆէոդալական խաւի վերացումը յանգեցրին Սիւնիքի գրչատների մանրանկարչական ձեւաւորումներում ժողովրդական միտումների ներթափանցմանը: 1456 թ. Ճառընտիրը պարունակում է պարզունակ կիսախորաններ ու լուսանցազարդեր: Ձեռագիրը թերեւս Եսայի ծաղկողի վաղ շրջանի գործերից է, քանզի մի քանի տարի անց Հերմոնի վանքում նա հանդէս է գալիս որպէս հմուտ նկարիչ: Յաջորդ երկու ձեռագրերում՝ նկարազարդուած 1476 եւ 1487 թուականներին, կան չորս աւետարանիչների պատկերներ, անուանաթերթեր, նաեւ լուսանցազարդեր ու զարդագրեր (նկ. 5, 6): Սրանք թէեւ մանրանկարչական բարձրարուեստ գործեր չեն, այդուհանդերձ Վերին Նորավանքի գրչատան արգասիքն են: Աւետարանիչների պատկերներն ունեն կանոնիկ յատկանիշներ, իսկ անուանաթերթերի զարդային միջավայրը կրկնում է նախորդ դարերից եկող մոտիւները: Մատենադարանի թիւ 6808 ձեռագրի (1476 թ.) աւետարանիչների պատկերները (Յովհաննէս աւետարանչի պատկերն ու նրա անուանաթերթն ակնյայտօրէն մէկ այլ ոչ հմուտ նկարչի գործն են) իրենց ոճով ու կատարման տեխնիկայով որոշակի աղերս ունեն Բոլորաբերդի ԺԵ. դարի նկարիչ Աբրահամի գործերի հետ (ՄՄ, ձեռ. թիւ 221, 2634): Այդ փոխազդեցութիւնը միանգամայն տրամաբանական է, եթէ հաշուի առնենք, որ Աբրահամը, ինչպէս նշուեց վերեւում, եղել է Վերին Նորավանքում եւ 1490 թ. Շարական է ընդօրինակել:

Այսպիսով, ԺԴ.-ԺԵ. դարերում Վերին Նորավանքը Օրբէլեանների հովանաւորութեամբ մեծ հռչակ է վայելել: Այստեղ աշ-

---

49 Հայաստանի տարածքում այս երեւակայական կենդանին ծանօթ է դեռեւս ուրարտական շրջանից (տե՛ս *Ա. Մնացականեան, Հայկական զարդարուեստ*, Եր., 1955, էջ 12, 122): Այն յաճախ է յայտնւում հայկական մանրանկարներում՝ հիմնականում որպէս Մարկոսի խորհրդանշան: Հանդիպում է դեռեւս Անիում նկարազարդուած 1053 թ. Աւետարանում, Մուղնու ԺԱ. դարի Աւետարանում, կիլիկեան գրքարուեստում:

50 **Հ. Մանուկյան**, *Формирование титульного листа в армянской рукописной книге*,- Լրաբեր, 1991, թիւ 4, էջ 99-107:

վանքի, Արատէսի, Վերին Նորավանքի, Հերմոնի ու Եղեգիսի գրչատների արգասաւոր գործունէութիւնը:

Ձեռագրեր Արատէսից

Մեկնութիւն ժողովողին Գրիգորի Նիւսացւոյ, 1303 թ. (*ԺԴ դարի յիշ.*, էջ 17)

Աւետարան, 1310 թ. (ՄՄ, ձեռ. թիւ 4446)

Աւետարան, 1586 թ. առաջ (ՄՄ, ձեռ. թիւ 7756)

Ձեռագրեր Վերին Նորավանքից

Աւետարան, 1312 թ. (Վրաստանի պետական թանգարան, ձեռ. թիւ 40)

Ժողովածոյ մեկնութեանց Ներսէս Լամբրոնացւոյ, 1329 թ. (Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի մատենադարան, ձեռ. թիւ 391)

Աւետարան, 1333 թ. (ՄՄ, ձեռ. թիւ 5651)

Ճառընտիր, 1456 թ. (ՄՄ, ձեռ. թիւ 993)

Մաշտոց, 1470 թ. (Ղ. Փիրղալեմեան, ՄՄ, ձեռ. թիւ 6273)

Աւետարան, 1471 թ. (ՍՊԲ-ի Արեւելագիտութեան ինստիտուտի գրադ., թիւ B-82)

Աւետարան, 1476 թ. (ՄՄ, ձեռ. թիւ 6808)

Աւետարան, 1484 թ. (Թաւրիզ, ձեռ. թիւ 15)

Աւետարան, 1487 թ. (Կոնգրեսի ազգային գրադ., ձեռ. թիւ 003.00.00)

Շարակնոց, 1490 թ. (Օդեսայի պետական առեւտրային ուսումնարանի գրադ.)

Աւետարան, 1495 թ. (ՄՄ, ձեռ. թիւ 5303)



Նկ. 1, Հմր 4446, թերթ 31բ

Նկ. 2, Վիեննա, Հմր 460, թերթ 99բ



Ակ. 3, Հմր 5651, թերթ 52ա

Ակ. 4, Հմր 5651, թերթ 91ա



Ակ. 5, Հմր 6808, թերթ 1դ, Մատթէոս աւետարանիչ



Ակ.6, Հմր 6808, թերթ 116բ,Ղուկաս աւետարանիչ

LES ARMÉNIENS EN CHYPRE À LA VEILLE, PENDANT ET AU LENDEMAIN DE LA CONQUÊTE OTTOMANE[1]

Gérard Dédéyan

Les Arméniens sont présents en Chypre depuis la fin du VI° siècle à la suite des campagnes du futur empereur byzantin Maurice contre les Perses, en Arménie méridionale. Une partie des habitants est transplantée en Chypre pour la mise en valeur agricole et la défense de l'île[2]. Lorsque les empereurs de la dynastie macédonienne (en réalité d'ascendance arménienne) mettent en branle, aux dépens des Arabes, la Reconquête byzantine, ils installent en Crète (reconquise en 961) et très probablement en Chypre (comme le suggère la toponymie), à côté de «phratries» de Grecs, des «phratries» d'Arméniens[3].

Sous la dynastie des Comnènes, les Arméniens sont d'abord – sous Jean II, en 1136-1137- déportés à Chypre, ensuite – sous Isaac Comnène, ci-devant gouverneur de Cilicie, puis empereur en Chypre/usurpateur (1185-1191) – recrutés pour la défense de Chypre, qu'ils assurent, à égalité de nombre avec les stratiotes grecs, lors de la conquête de l'île par Richard Cœur de Lion (1191)[4].

Au début du XIII° siècle, les Arméniens, constituant une partie des parèques, semblent avoir un solide enracinement terrien[5]. La toponymie est révélatrice de l'implantation rurale (Arménochôri, Arminou). La mention dans les actes, de «vignes erminesques» suggère une spécialisation[6]. L'emprunt, pour le vocabulaire économique et sous la forme grecque *chanoutin* du mot arménien *khanout'* (d'origine syriaque), présent dans les actes et désignant soit une taverne, soit une boutique[7], amène à parler des activités commerciales des Arméniens, qui seront présentées ultérieurement.

Les alliances matrimoniales entre les Lusignans et les souverains du royaume d'Arménie cilicienne (Lewon Ier, d'abord, les Hét'oumiens ensuite) sont favorables à la coopération politi-

1 Nous remercions le Cyprus Research Centre et la Congégation Mékhitariste pour leur aide documentaire.

2 Gérard DEDEYAN, «Les Arméniens à Chypre de la fin du XI° siècle au début du XIII° siècle», dans *Les Lusignans et l'Outre-Mer* (Actes du Colloque Poitiers-Lusignan, 20-24 octobre 1993), Poitiers, 1995, p. 122.

3 Id., *ibid.*

4 Id. *ibid.*, p. 128-129.

5 Id., *ibid.*, p. 129.

6 *Le Livre des remembrances de la Secrète du royaume de Chypre (1468-1469)*, publié par Jean RICHARD avec la collaboration de Théodore PAPADOPOULLOS, Centre de Recherches scientifiques, Nicosie, 1983, p. 210 et n. 2 (plants venus d'Arménie? Mode particulier de culture?), 214, 215 (voir aussi PAGOURAN – pseudonyme de Vahan M. KIURKDJIAN – *L'île de Chypre* (en arménien), Nicosie, 1903, p. 51, n. 2, Frédéric MACLER, *Ile de Chypre*. Notices de manuscrits arméniens, Paris, 1923 – traduction résumée et commentaire de Pagouran, p. XXVIII, n. 1).

7 *Ibid.*, 159 et n. 3.